

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Այսօր կը զենեմ պատկերներ քանի մը հե-
ռագիրներու՝ փոխանակուած Ամեն. Ս.

Պատրիարք Զօր եւ Կաթողիկոսական
Ընտրութեան Պատրիարկ՝ Լուսա-
րապետ Գեորգ. Ս. Կիւրեղ Թ.
Վրդ. Իսաակեանի միջեւ:

Երեւան, 29 Ապրիլ 1941

Ողջոյններ Երեւանէն. հասած եմ 14-ին.
Պէնսոն՝ 25-ին, տեղեկացուցէք տիկին Պէ-
նսոնին:

ԿԻՒՐԵՂ ԻՍԻԴՈՐԵԼԵԱՆ

Թէ հրան, 23 Մայիս 1941

Կը մեկնիմ Սպահան. պիտի զրկեմ տե-
ղեկագիրը Կաթողիկոսական Ընտրութեան
յետաձգման մասին. պիտի տեղեկացնեմ
մեկնումս. ողջոյններ:

ԿԻՒՐԵՂ ԻՍԻԴՈՐԵԼԵԱՆ

Երուսաղէմ, 23 Յունիս 1941

Փութացէք վերադառնալ Երուսաղէմ
Իրաքի ճամբով. դիմում եղած է Իրաքի
կառավարութեան ստանալու համար Զեր
transit վիզան:

ՄԵՍՐԻՊ ՊԵՏՐՈՍԻԱՐԿ

Սպահան, 26 Յունիս 1941

Շնորհակալութիւններ հեռագրին համար.
կը պատրաստուիմ մեկնելու:

ԿԻՒՐԵՂ ԻՍԻԴՈՐԵԼԵԱՆ

ՏՈՆԱԿԱՆԴ ԷՒ ԻԵՄԱԿԱՆԴ

* 28 Մայիս Դշ. — Յետ միջօրէի ժամը 3ին,
վարդապետաց եւ ժող. աշակերտաց մէկ մասը,
գլխաւորութեամբ փոխ-լուսարարապետ Տ. Քէսրդ
Վրդ. Ի. 2իթենեաց լեռը թարմրացան Զամբար-
ման նախատեսակը իր պատմական վայրին վրայ
կատարելու համար. Գաղաքական այս տաղան-
ալայից կացութեան հետեւնքով, կառավարու-
թիւնը հրահանգած էր երեք գլխաւոր միաբա-
նութեանց պետերուն, մինչեւ լուսատեսի ժամը
լմիջոցեւ ըլլալ իրենց կրօնական արարողու-
թիւնները. Ուստի ժամը 8.30ին Միաբանութիւնը
վանք վերադարձաւ, կատարելէ վերջ հակումի եւ
զիշերային ու առաւօտեան ժամերգութեանց
պատուով:

* 29 Մայիս Էշ. — Զամբարմում, առաւօտեան
ժամը 7ին ամբողջ Միաբանութիւնը, ինքնա-
շարժութեամբ պաշտօնական գնացքով, Զամբարման
սարը ըստճրացաւ, ուր յետ Զրաշափառի արա-
րողութեան՝ Ամեն. Ս. Պատրիարք Զօր գլխաւոր-
ութեամբ կատարուած, Ս. Պատարագ մատու-

ցուեցաւ սրբալայրի շրջափակին մեր բաժինին
մէջ. Պատարագեց եւ քարոզեց Գեորգ. Տ. Արտա-
ւազդ Արք., բնաբան տանելով Գործք Առաքելոցի
խօսքը՝ «Եւ եղիլք ինձ յիշալք յերուսաղէմ... եւ
մինչեւ ի ծագս երկրի»։ Ներկայացնելէ վերջ Յի-
սուսի ապրած կեանքը իր առաքեալներուն եւ
մտերիմներուն հետ, մատնանիշ ըրաւ սա պարա-
գան թէ, Զամբարման լեռան վրայ՝ միայն «մինչեւ
ի ծագս երկրի» շրջելու հորիզոնը բացուեցաւ
առաքեալներու աշխիւն. Ասկէ՝ սկսաւ քրիստո-
նէութեան համալսարնային տարածումը. Ու շնչ-
տեց մեր՝ հայերուս զարծը ի Գրիստոս, քարոզու-
թեամբը երկու առաքեալներուն, որոնց զործը
շարունակած ենք ազգովին, յիշանքը ըլլալով
քրիստոնէութեան:

* 1 Յունիս Կիր. — Երկրորդ նաղկազարդ. Ս.
Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Զրեշտակապետ,
Քարոզեց Տ. Շնորհք Վրդ. բացատրելով իմաստը
այսօրուան կիրակիի երկրորդ նաղկազարդ կոչու-
մին. Ու ներկայացնելէ վերջ հայկական աւան-
դութիւնը՝ այս տօնին առիթով Ս. Գր. Լուսա-
րարչի կեանքին մէկ դրուագը եղող, յորդորեց
հաւատացեալները կազմելու իրենց մէջ համբե-
րութեան առաքելութիւնը, մանաւանդ պատե-
րազմի, անձկութեան ու տաղանալի այս օրերուն,
երբ փորձութիւնները բազմապիսի են:

* 8 Յունիս Կիր. — Հոգեպալաւս. Երէկ, յետ
միջօրէին, ամբողջ Միաբանութիւնը, գլխաւոր-
ութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր՝ Ս. Փրկչի
վանքը գնաց, ուր Զրաշափառի հանդիսաւոր ա-
րարողութենէն վերջ կատարուեցաւ Հոգեպա-
լաւստի նախատեսակը:

— Այսօր, առաւօտեան ժամերգութիւնը պաշ-
տուեցաւ ի Ս. Յակոբ, իսկ Ս. Պատարագը՝ մա-
տուցուեցաւ ի Ս. Փրկչի. Պատարագեց Ամեն. Ս.
Պատրիարք Զայրը եւ քարոզեց ներկայացնելով
Ս. Հոգիին դերը եւ ներգործիչ զօրութիւնը Եկե-
ղեցոյ հաստատութեան, կազմակերպութեան եւ
զարգացման ու ծաւալման մէջ, զարեւու ըն-
թացքին:

* 15 Յունիս Կիր. — Սկիզբն Բարեբեմն Կիւ-
րակից եւ յիշատի եղիայի մարգարէին. Ս. Պատարագ
մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ.
Գէորգ Վրդ. «Խոստովան եղերուք միմեանց ըզ-
մեղս» բնաբանով. Մատնանից որ իւրաքանչիւր
անհատի պարտականութիւնն է օգնել իրար,
աղօթել իրարու համար. վստայի մարդը մեղան-
շական է. Այս ներկայացուց եղիա մարգարէն
իրեւ հաւատարիմ պաշտօնեայ Աստուծոյ. խորխոր,
անտղոք՝ անարդարութեանց հանդէպ:

* 16 Յունիս Բշ. — Մրցոց Կուսմանց Հոգի-
սիմեանց, նախատեսակը կատարուած էր երէկ,
յետ երեկոյեան ժամերգութեան, Ս. Զրեշտակա-
պետաց վանուց եկեղեցիին մէջ, հանդիսապե-
տութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր:

Այսօր, առաւօտեան ժամերգութիւնը պաշտո-
ւեցաւ անդ. եւ Ս. Պատարագ մատուցուեցաւ
Ս. Հռիփսիմի մատուռին սեղանին վրայ:

* 21 Յունիս Շբ. — Ս. Գրիգոր Լուսաւորչի եղմ
ի վիճալէն. նախորդ երեկոյին կատարուած էր
նախատեսակը, այսօր հս. հանդիսաւոր պաշտա-

մունքէն վերջ, գիշերային ժամերգութիւնը: Ս. Պատարապը մատուցուեցաւ Ս. Սահմանս աւան-
դատան մէջ կանգնուած երեք խորաններէն Ս.
Գրիգոր Լուսաւորչի անունով կանգնուած ին վրայ:

* 22 Յունիս Կիր. — Տօն Կարողիկէ եկեղեցւոյ
Սրբոյ Էմիլիանի. հանդիսաւորապէս պաշտուեցաւ
գիշերային ժամերգութիւնը, նաեւ անդատանը,
Ս. Յակոբայ մայր տաճարին մէջ, և աւագ խո-
րանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարապը:
Քարոզեց Տ. Արթուր վրդ. (Տե՛ս «Թիւն»ի ներկայ
թիւը, էջ 131):

* 29 Յունիս Կիր. — Ս. Պատարապը մատուց-
ուեցաւ Ս. Յարութիւն, Հայկական Գողգոթայի
մեր վերնատան մէջ: Քարոզեց Տ. Նորայր վրդ.
«Թաշակն մեղաց մահ է» բնագրով: Յոյց տուաւ
թէ արդի մարդկութիւնը՝ զօրաւորն ու տկարը,
մոռնելով սատանայի ծառայութեան մէջ, կը
ստանայ իր թշուարը, որ մահն է՝ սպանութիւն:
Ներքեւ օրերուն: Յաւանքից ժողովուրդը ա-
պագայի երջանիկ տարիներով, խորհելով որ
մարդկութիւնը աւելի զգաստ պիտի ըլլայ տագ-
նապի այս շրջանին անցումէն վերջ:

ՄԱՐԺԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԹԱՐԺԱՄԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

14 Յունիս 1941 ին, Շարաթ օր, տեղի ունե-
ցաւ Սրբոյ Թարգմանչաց Վարժարանի մանչերու
Տարեկան Դպրատանակէսը, ժառանգաւորաց Վար-
ժարանի խաղալարին վրայ, նախապատկանաբ
Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և ի ներկայութեան
Միաբանութեան և որոշ թիւով քաղաքական:

Գլխաւոր մարզական կեանքը, այս տարի ևս,
կանոնաւոր ընթացք մըն է ունեցեր, շնորհիւ՝
երեք երիտասարդ պարոններու՝ Վահէ Ղազար-
եանի և երկու օժանդակներու՝ Յակօբ Ստեփան-
եանի և Գէորգ Հայրապետեանի ցօժարակամ անձ-
նութիւններու:

Վարժարանի աշակերտութիւնը բաժնուեր է
չորս խումբերու (Ասպէս, Կոթիւն, Ագաս և Մասիս):
Նախորդ շաբաթներուն, կատարուեր են արդէն
Պասկէթ-պօլի, Ֆութ-պօլի և Շուէտական մար-
զանքներու մրցումները: Այսօր, տեղի ունեցաւ
միայն սպորտական բաժինը՝ մարզիկներու եւ
սեղանաւորներու մրցումներով, 50-800 մետր վազ-
քերով, երկրորդ ու քարծր ուտումներով, զըն-
դարձակութեամբ, զօրշարժումով, պարանաճու-
թեամբ, Շուէտական մարզանքի քանի մը փոք-
րէրով և փոքրիկներու զուարճախաղերով: Հե-
տաքերական էին նաեւ Վարժարանի Դպրիկ-
ներու խաղերը՝ իրենց ցոյցերով, երգերով եւ
զանազան կենդանիներու (այծ, շուն, կով, խոզ,
սպառաշէն և այլն) ձայներու նմանեցումով: Իրմ-
բական խաղերու մէջ առաջին հանդիսացողները
ստացան յոյն խաղիկներու յատկացուած բաժակ-
ները և վահանները: Իսկ մարզիկներէն ողիմ-
պիականի մէջ առաջին և երկրորդ հանդիսացող-

ները՝ մետաղներ, երրորդները՝ ժապաւէն: Ուշա-
գրաւ էր նոյնպէս ընդհանուր ոգևորութիւնը մա-
նուկ ու պարմանի այս մարզիկներուն մէջ, որոնք
ցոյց տուին ճկունութեան, յարատեւութեան,
աշխատի և կարգապահութեան ոգի:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

* 2 Յունիս Բշ. — Այսօր, Ս. Աթոռայ Ամեն.
Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիր
մը ուղղեց Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն.
Տ. Մեսրոպ Ս. Արքեպս. Կարոյեանի՝ անոր ան-
ուան տօնին առթիւ:

* 12 Յունիս Եշ. — Ամեն. Ս. Պատրիարք
Հայրը, հետն ունենալով առժամայ զիւանապետ
Հոգ. Տ. Սերոբէ վարդապետը, ներկայ գտնուե-
ցաւ տեղւոյս Անկիլիքան Մայր եկեղեցւոյ մէջ
Մեծն Բրիտանիոյ ձօրձ Ե. Վեհ. Թագաւորին ծը-
ննդեան տարեգարձին առթիւ կատարուած զո-
հարանական պաշտամունքին: Նորին Ամենա-
պատուութիւնը, կայսկապետական զգեստաւոր-
մամբ խորան բարձրացաւ, և բարեմաղթութիւն-
ներ ըրաւ Վեհ. Թագաւորին, Թագուհոյն և Կայ-
սերական Տան բոլոր անդամոց արեւ շատութեան և
բարօրութեան համար: Գոհարանական մաղթանքի
աւարտումէն յետոյ Ս. Պատրիարք Հայրը ներկայ
գտնուեցաւ Անկիլիքան Եպիսկոպոսարանին մէջ
կատարուած շնորհաւորական ընդունելութեանց:
— Նոյն օրը, Նորին Ամենապատուութիւնը
Հոգ. Տ. Սերոբէ վարդապետին հետ այցելեց Ե-
րուսաղէմի Նահանգային Կառավարիչ Վեմ. Մր.
Բիլլիթ-Րօշի ապարանքը, և այս առթիւ շնորհա-
ւորեց Նորին Վեմութիւնը:

* 20 Յունիս Ուր. — Եռեկօտաւոր իրաւա-
դէմի Նոր Բնիչ, Հիւպատոսը իր առաջին այցե-
լութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

* 24 Յունիս Գշ. — Ամեն. Ս. Պատրիարք
Հայրը, իր հետ ունենալով Միաբանութեանս
Կերպարաւոր Հիւրը՝ Արտաւազդ Արքեպս. Սիւր-
մէեանը, այցելութիւն մը տուաւ Հայֆայի եւ
չրջակայի մէջ բնակող (մասնաւորաբար Նազա-
րէթ աղայատան) հայ գաղութին:

* 30 Յունիս Բշ. — Ամեն. Ս. Պատրիարք
Հայրը վառք վերադարձաւ Նազարէթէն:

— Պատրիարքական այս տաքնապի օրերուն,
Հայֆայի գաղութէն բաւական թիւով հայ բն-
տանիքներ երուսաղէմ փոխադրուեցան, կեանքի
ապահովութեան համար: Անոնք մեծ մասով աւ-
ստինականութիւն գտան վառքէն ներս (Թէ՛ երու-
սաղէմի և Թէ՛ Բեթլեհէմի մէջ), ուր, տրամա-
զրելի բոլոր պարագայ սենեակներն ու խուցերը
յատկացուեցան իրենց բնակութեան համար: Կը
յուսանք թէ աշխարհ չուտով պիտի գտնէ իր
խաղաղութիւնը, որպէսզի զպղտիկ սա տարա-
դրութեան ելած ընտանիքները զառնան իրենց
լքուած տները, և վերադառնան իրենց կեանքին
բնականօրէն ընթացքը: